


Համայնական







ՀԱՎԵԼՎԱԾ I

ԿԵՆԴՅԱՆԿԱՆ ՀԵՔԻՍԹՆԵՐ ԵՎ ՀԵՔԻՍԹ-
ՍՎԵՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (156). ՀԱՎԼՈՒՆԻ ԹՈՒՐ

Ժուկով-ժամանակով Պոռշ անունով թագավոր մե կէղնի: Պոռշ թագավոր կը նստեր կաթար: Օրերից մեկ օր թագավոր ուրին-ուրին կը խոսա, կըսե.

— Քառսուն տարի թագավոր իմ էղի, կոխվ չըմ յրի: Իմ կե-
ծակ Հավլունի թրից դուշմըներ չըմեն կը դողեն: Ես օր մեռնիմ՝
ի՞նչ պտի էղնի իմ թուր: Արի զէդ թուր թալիմ ի ծով, թե չէ իմ իրեք
տղեկներ կը կովին, զախշար կավիրին:

Կը կանչե զմեծ տղեն, կըսե.

— Իմ մեռնելու օր մոտեցեր է, օր իմ Հավլունի թուր մարդու
ձեռք չընդնա, ախշար չավիրի՝ տար թալ ի Խազանա ծով:

Մեծ տղեն կըսե.

— Պատրաստ ինք քու հրամանքին, գուզիս թալիմ ի ծով, գու-
զիս զախշար ավիրիմ. ի՛մալ օր գուզիս՝ հմալ կէնիմ:

Թագավոր կըսե.

— Կիտամ չի՛ թե զախշար ավիրիս, կիտամ օր թալիս ի ծով:

— Աղե՛կ, թրդ քու կամք էղնի,— կըսե տղեն, կառնե զթուր, կը
տանե. հմա չը թալե ծով, կը պահե, դառնա գիկա հոր մոտ:

— Թալի՛ր,— կը հարցու թագավոր:

— Թալի:

— Օր թալիր՝ ի՞նչ էզավ:

— Բան չէղավ,— կըսե մեծ տղեն:

— Սուտ կըսիս,— կը հեռոտի թագավոր,— գնա՛ զիմ թուր
րի, թե չէ՝ զքզի կանիծիմ հուր-հավիտյան:

Տղեն կը վախենա, կէրթա զթուր կը բերն:

Կը կանչն գիկա միջնեկ տղեն: Էդ լն զհեր կը խարն՝ չը թալն
թուր ի ծով:

Կը կանչն չըմնու պզտրկին: Պզտիկ տղեն գիկա, չոք կը դարկն
հոր յառնջ: Թագավոր կըսն.

— Որդի՛, ես շուտով կը մեռնիմ: Քու ախպրորտիք ընծի խա-
բին, ընտոնց անիծեցի: Ես դինամ, դու ընծի չըս խա՛բի, խոսք
կիտա՛ս, օր ընծի չըս խա՛բի:

Պզտիկ տղեն կըսն.

— Քու խոսք վրը իմ գլխուն, վըր իմ աչաց, օր ըսիս՝ «Գնա՛
քրզի թալ ծով», կը թալիմ: Տո՛ւր զթուր տանիմ թալիմ ծով, քու
կամք կատարիմ:

Օրն ուրբաթ կէղնի, տղեն կաննն զթուր, կը տանն թալն ի ծով:
Օր կը թալն՝ ծով կէռա, ուր պորտ կը թալն շուրի էրկինք: Տղեն շատ
կը վարմանա, կը վազն գիկա հոր մոտ:

— Թալի՛ր, — կը հարցու թագավոր:

— Թալի:

— Օր թալի՛ր՝ ին՞չ էղավ:

— Օր թալի՛ր՝ ծովն էռաց, տակից օրոտմունք էկավ, շրեր սա-
րերու պես յիրար դարկըվան, արար ախշար դողաց, վազի, էկա...

— Օռչնվի՛ս, — կըսն թագավոր, — իդհաղ հանգիստ կը մեռ-
նիմ: Իմ գահն ու թագ, իմ կաթար քաղաք քրզի ժառանգութեն:

Էդ օրվընից, կըսին, չըմենն ուրբաթ օր հազանա ծով կէռա,
կը փրփրի, էն յապով, օր ծովի մեջ քաջքեր կը կովին յիրար հետ,
ամեն մեկ գուզն ձեռք բերն զՀավլունի թուր, շուրի չըսօր չըն կոնա,
չըմքի Պոռշ թագավոր զթուր կախարդեր էր: Օր պտի գա, կըսին, օր
աստծու հրամանքով ծով պտի ցամքի, կտրիճ տղն մե պտի էղնի,
օր տիրանա թրին, հըմա շա՛տ ժամանակ է չընցի, նա՛ էդ տղեն
կա, նա՛ շուր կը պակսի հազանա ծովուց:

